Դ. Արամ Դոնաբեդյան

Քվազիմոդո կիրակին

Ի. Շեմեր

Այս մարդաշատ փողոցում
Առավելապես ստվերներ են
Հանդիպում

Առանց դուռը բացելու

Երեկո:
Սիրո նրբորեն քողարկված ժեստերը
հազիվ փայլում են իմ լուսամուտի միջով,
խամրելով
շտապ ու անհայտացող հեռավորությունների հետ:

Ես սեղմվում եմ պատշգամբի պատուհանին
նայելով գետի հոսքի
ու չզբոսնված պարտեզի խորքը:
Լսելով,

թառամած տերևների շարժման մեջ
ունկնդրելով քո ոտնահետքը,
արձանից կանչող
քո ձայնը,

Ոչ առանց
մեր երազի լեզվի:
Դեռևս պարզորոշ նշմարվող,
անբռնելի արտացոլումը -
Եղած, լինող, չեղած:

Ձեռքը

Խոսեք ձեռքի հետ
ձեռքի ափի աչքը

մի պարզ ու անհատակ գետի նման
թողեք նայի ձեզ

Ցուցադրեք նրան երկինքը
փասիան – կնոջը
հովհարն
ամպերում բացելիս:

Խոսեք քանի դեռ կարող եք
մեծ թրերն անձրևի
արցունքով բոցավառվեցին տիկոջ
հայելու մեջ:

Լսեք լռությունը
ձեռքի՝ դատարկ ձեռքի
ողբալի աճյունը
հնքը խավարի:

Լսեք ձեռքին:

Փղերի որսը

Մի առավոտ աշխատանքի գնալիս,
չաղերի բարեփոխիչը մսագործի խանութի ցուցափեղկից ներս
հայտնաբերում է սեփական լեզուն:

Փղերի որս է նա կոչում այն հիմնավնորումները,
որ շփոթում են պողպատը ճարպի, լուսնի լույսը
մորուքների հետ:

Կճղակների տակ կոխոտված իր երազում
հարցում անելով, թե ինչո՞ւ
«գոմեշի նահանգը» գոմեշներ չունի:

Թղթե տիկնիկը

Դու եկար ըստ հրահանգների
և ինչ փոքրիկ չափումներ
քո չափին հարմար:

Մի թղթե տիկնիկ՝
ըստ բանաձևի
արտադրված:

Այդքանը:

Բիս

Ցուլն ասպարեզում
անհայտացավ

Երբ փիղը
Վարգեց վայրի

Կամ էլ՝
այսպես է մեկնաբանում
դետեկտիվը:

Դրսում՝
Յուրաքանչյուրը
Փայտյա ոտքով
մի ցլամարտիկ է:

Գողի այլաբանությունը

Յու Չինգ Վուն՝ գիշերվա պահակը, հարցնում է նրան՝ ստաժավոր գողին, թե չի՞ զղջում արդյոք մահապատժի ճանապարհին: - Կիրակի օրը, - ասում է նա, - ունեվորի քունքերի միջև, երևակայության գետը զուլալ է, իսկ հոսանքը նրան հեռու է տանում: Մի անտուն մարդ երկուշաբթի ներքևի ժայռերի վրա գտնում է ոսկու տասնչորս պարկ, և ապա, սառչելով խավարում չի գտնում լուցկի:

Ղառղառի նվիրվածությունը

Տկտկացող
տամուկ:

Իր նշտարի մեջ
ընդարմացող խավար:

Նիհար թռչնուներ՝
շագանակագույն լույսին հնազանդ:

Աստղերը հրաժարվում են իրենց
արևադարձային սաղարթից՝

թռչնի կերի պես փշրվելով
մեր գլխավերևում:

Մենք բաց ենք անում մեր երգը.
Մնում ենք ժայռի նման:

Գիշերվա կատարյալ ձեռքը
սանրում է թանաքն ու փետուրը

ուռուցք հայտնաբերելով
եղեգնափայտի կոկորդում:

Որսորդի ծուղակն ավելի քան
Համոզիչ -

Դողդղացող անիվի քամին
ցնցում է մեզ:

Ե, ի, ր, կ, ն, մ, ռ, ս, ք, տ և թ տառերի ձայնարկումը

Քրիստեն Մ. Քրուստին

Նիքրի կե քրիսթի տրիկսի քրուն.
Թի նիտի ուկտի ուքրի,
Քուտ:

Քիկի են եստե ուստի նիկրիթ,
Նու տե քրուտի,
Կրիսկի նե քրեմ:

Թի նիտկե քրուս, թի նիտկի քրունկի,
Ռե, նիրի, նեթա են իրթի,

Նիկրի թե նեցիիր, նե:

քու քու թե քիսսքի.

Օլայի՝ր, Տեր

Ես թշնամու ձայնն եմ
իմ ձայնի մեջ

փշերի կրակը և
երեխայի մուտքին սպասելը:

Ես ուղարկում եմ ձեզ սանդալի փայտ, բայց
տալիս եմ դա իբրև աճյուն
արեք ձեր խաղաղրույքը
խաղամոլի աչքերով:

ինձ փնտրեք
կաղացող շատրվանի մոտ

աղով բեռնված ուղտը
գողանալիս: Ես այն

ծովահեն արևներն եմ,
որ օվկիանոսի երկնքով ընթանալիս

կապույտ լուսամուտներն է փշրում:

Հառաչանք

o
Մարդը փողոցում
o
Կամայական մարդ
o
Մաքուր գույնով մարդը
o
Մարդը ստվերեց հողը
o
Սոված մարդը
o
ինչ է մարդը
o
կավճի մարդը
o

զղջացող մարդը
o
հարմարության մարդը
o
կապիկ մարդը
o
մարդն առանց տեսիլքի
o
մարդը մարդուց

Հրավիրված

Կամաց,
Մի քշեք փակ փողոցով, որ
Ասես երկնքի դարպասն է: Լիքը ժամանակ կա
այդ ռումբայի համար,
կամ ծննդի համար մի սարդի, որին չի կարելի
տրորել:

Թողեք անձրևը ջնջի մեր դեմքերը:

Քանի դեռ փղերը թռչում են
դրամատերը, մսագործը և
մրցարշավի գրազ բռնողը
դրսում
մի շռայլ շիկամազ գազան են կերակրում:

Ավելի ուշ, մթնող ավազանի մոտ,
դուք կդիտեք ձեր բերանով
խոսող հինգ տարեկանին:
Իսկ քանի դեռ դուք դիտում եք՝
նա հին սրբերի քմծիծաղով
կհագնի ձեր կուզը:

II. Ծովագնացը

Ինչպես՞ է նա հետևելու անհայտին:
Ինչպե՞ս է նա գտնելու այն, ու երբ գտավ
Ինչպես՞ է իմանալու դա: Արդյո՞ք հոգին
Մի անգամ տեսավ տիեզերական միտքն,
Ու ճանաչեց մասն, ու ճանաչեց ամբողջը:

- Միջնադարյան Լատինական Քնարերգություն

Կապույտ
երկուշաբթի

Այն խորտակեց
ճոճվող նավերն անոնց...
Հիդրան էր՝ ցնցեց
մարդկանց ներքևում-
Հարյուր վանական
կականում էին այնտեղ
VERA DOCTRINA
Դեսպարիայից
Հարավ ուղղվելիս:
Կուչ գալով նեխվել է
սևացած:
ՈԳԻՆ կախ տալով
խորը փորձառության մեջ:
մաթեմատիմոգը
սառնորեն սքողում է
լուսինը և Քո Ծաղկունքը
ՍԱՀՈՒՄ Է
իր առանցքներից:

Nihil ex nihilo fit (Ոչնչից չի գալիս ոչինչ)

Երբեք չեմ հավատում, որ մարդիկ մեռնում են: Նրանք ուղղակի գնում են հանրախանութներ:-
-Անդի Ուարհոլ

Թվաբանական կատաղությունը մոլեգնում է
նոր թվերով չբնորոշվող անգլիական ֆունտի շուրջը՝
մարմինը կարոտում է առավել շքեղ պերճանքի վերտառության:
Կեսգիշերին ՀԵՂՁՈՒԿՆԵՐԸ իրական շնչառություն են առնում:
Կենդանի ոգին մի պոմպի նման
ինքդ քեզ փող է փոխ տալիս: Ու ահա, իմ սիրելի կախարդուհի, եկ ձևացնեք թե
Հեղափոխությունն հստակեցրեց երազանքի վերջը: Զգացմունքային աշխարհը հապաղում է:
Մաշկի մեջ ներսահող մեր հերոսը բուրմունքներին հրավիրում է
հաշվեկշռի հերթական վերահաշվարկին: Ձեր կարծիքով, Փոքրիկ արջուկ,
ի՞նչ պիտի աներ կանաչ ու հանգիստ լեռը: Ես քաշվում եմ ետ,
տակավին վերաիմաստավորելով իմացական ուժի ափիոնը
«ինքն է, որ կա, bay-baay, փորձեք և տեսեք»... Sensus Communis,
հանքաքարը դուրս բերելու պարամագնետիկ գործընթացի նման
անհաջող մի ճամփորդություն առքի ու վաճառքի հարկերում
...Երկինքն իր 3-րդ եռամսյակի մեջ՝ թափվում է ներքև...
Ծուխն արձագանքում է ծովափի վրա:
Խաղը ցուցադրում է մրցակցին, լուսնի թիրախը,
խռխռացնում է խոսափողից
սայթաքող ինչ որ մեքենայի վրա
և զարթնում է աղոթելով
ճարպոտ օղաբլիթ-աստծուն
որ ժխտական պատասխան է տալիս,
երբևէ
տրտմելուն:

Ակապելլա
(անտիկ թմբուկով)

Նրանց Bip-ը երկար է ձգվում վախեցած
խաղում է ողբերգակը
գաղտնազերծված Օ Այո, մտածում է կրկին
նրա նավակողը շատ շուտով ընկավ -
ՃԱՔ ՏՎԵՑ արքայությունը քո, համընթաց քամի,
գիշերով կրակ նշմարելու երազ:

Ստրուկ ու վարձկան, ԱՅՍ ԿՈՒՅՏԸ
բալետ անմեղսունակ: Հաղթողը վերցնում է իմ շեփորը
Ծպծպացնելով լեզուն՝ թե ճամփի փոսը
տեղ կանի, հարկավ, - ծնկի եկ - ծո: ԵՏ ԴԱՐՁ
Եվ երաժշտությունը չքվեց՝
և քարտեզը դրա:

Կոպիտ սխալ

Չարլզ Ատլասը
Puteaux S.O.S
է ուղարկում .

Ուժեղ մարդը տառապանքով
Վթարից դուրս է սողում:

Եվ ոչ այսպես, նայելով դեն
նա բաց թողեց գեթ մի նշան --
Կոպիտ սխալ, ներքևի ճանապարհին՝

Վարը այստեղ:
Երգն երգված չէ դուք դա գիտեք

Վերքի մեջ մատն ընկղմելով/
լուսարձակող մեքենաները մեր:

Ասուպի իրար լրացնող կայծկլտոցները,
Անխուսափելի, ուր Դոկտորն ընկավ:

Քաղցրեղենով լցոնված այս փոքրիկ
Ընկրկումները: լավ հարմարեցված Գոլորշին
(ինչպես որ կար)

Բծավոր
տենդ

Եդեմն իր ծիլերն է
արձակում:
Ճնճղուկը

յուրաքանչյուր
փշուրի հետ
սվին-կտուցով կտցում է
ձեզ:
Գժանոց՝
շրջահայաց,
ու տանու
մեկը,
ասպատակի կամ
սանձի չբերող
ՆՐԱՆ: Կարուզոն,
մտախոհ հպվել է
լուսարձակին
սխալ նոտա
վերցնելով:
Դժգոհելով
փղային այս
քաղցր թռիչքի
բախտից:
Առկախ
ճախրը օրվա
ուր վերջում
մայորկա- կամ նյու
յորքա- ցին, նայում է
ներքև լայն
ճանապարհին, Անիծում է
Լաշս Բերիի ձիուն,
որ երրորդն էր
մրցարշավում: Թաքցրած
այնտեղ առավել
վիրավոր քան ընկալելի
այս
hizzy-hizzy պարող
զինվոր տղան

(թխկթխկացնում է մաշված երաժշտատուփի պես):

Եռանկյունու պահակը

Selah:
Թեթև-հեշտալի-
փայփլող տեգը.
Հանդերձավորած ապստամբի
մուտքն է:
Աշխույժ տարուբեր,
մի որոտընդոստ
ԳլխաՊՏույտով, հա, էլի/
Ոգեզուրկ փակոց: Ծորակի վրա,
ջրվեժի միջև
և ջուրն Անմաքուր, ֆալշ
"Վույ-Օհ" (երկձայն ջութակը
մթնած փչակում), շահեկանորեն գերազանցելով
վայրի աղմուկին:
Նրա թափ առնող եռանդը մարեց
Փնջլիկ-մնջլիկ 4-անիվների
փոխանցիչներին / քո տերը
գետնած ու
հյուծված մի մարդ՝ ավազանի մոտ
տնքացող,
այնքան,
այնքան վեհերոտ -
արտասանելով. «հեռացիր տղա,
գնա ետ դպրոց» ... Ստրկաբարո Ետնախորշերում
զվարճանալիս Սերն ինձ թև տվեց: Կուչ եկ, չնայած,
միշտ հպարտ էիր, ամեն ինչ անցավ Անառակներիս քաղցր Բուրմունքից
քարշ գալով, դժվար ու բարձրակրունկ
սոլերի վրա՝
ԿԵՑԻ՝Ր: Ինքնագոհ: արևհար դողը, Մայր՝
չհարմարվողը- կարոտ մեղմորեն Կառավարելու: Շներն հսկում են
սին կացարանը, guinivere / անփթությունն իր վատնեց Պահակին,
հետին մտքերով մոտենալու հետ:

Բողոք-զգուշացում

Անըմբռնելի հանրահաշիվ:
Նիմասոն գլուխ է ջարդում Թագուհու թևում,
զինվորը նավակի համար: Մի կեղծ քայլ, դե կերեք ֆիգուրը,
վերհիշեք Ընկույզի և ուրցի մեջ շոգեխաշած Գեներալին:
Հետին սիրհարները խելահեղորեն գործի են դնում դարվինի տեսությունը,
ապագաղտնագրելով կապույտ դևի վերջին կոմյունիկեն:
Շաքարը մինչ այդ, ահ, գիտեր արդեն, բզզոցը
«Հատվող Շուշանի»՝ ավելի սպիտակ. շագանակագույնի թորշնելով: Ալելույա,
նրանք մտրակելով քշեցին նրան բարձունքն ի վեր
Արյան ողորմին, Մայո, վերջացնենք ու քարշ գանք դեպ
Փարիզ: Ի սկզբանե էր շյուղերով գործելը: Այս չսափրած
խտտող Այտմորուսով դեպ հրեշտակների բույնը, Հաղթո՝ղ:
Մի լծկան ու մի երգ: §Զվարճալի¦ Կիրակիներ (որ ինձ համար սուլեցիք)
Ծոմապահության… ժամանակ: Mardi Gras-ում, Ես հեծա ձեր
կովին և մորթեցի գառն Ալուետտի:

Թիկն տված
սառնասրտությունը

Բոբի խաղալիք գնացքն է. անիվները պտտվում են,
քանի դեռ այդ ձեռքը չի խաղում
անհաստատ կամրջին: Այս անկյունում գերմարդն է
Ավարառում
Բրոդվեյի վրա:
Լավ օր էր՝ ասացիք:
Եվ ոչ միայն իր անունից է զրպարտիչը նախշում
Մեծ ֆինանսագետներին:
Թռչուն-մարդու խրտվիլակը լցոնված է
ընթրիքից հետո: Ամառն
հասունանում է
խոպանի ոսկորներում: Մենք կրակում ենք ոչ թե նետերով կամ Բամբասանքով
այլ ողջունում ենք խաբեությունը սպասյակ տղայի:
Մայիսյան կեսօրին՝ գոլֆի դաշտերից կույսի ծնունդ
իժը սահում է ներքև՝ ավան: Ասպարեզներում ամենուր ծաղկունք
Մագիլ և

«Բարի լույս, Բարի առավոտ», ասես անզգայության մեջ
դատարանի դռան նրա Թակոցը
(էժանագին զարդարանքներ տարեց կոփամարտիկին,
մնացյալում կարող եք ինքներդ էլ համոզվել):

Փնտրվող
մարդը

Առանցքային
թեքություն
փետուրի տակ
(ԿԱՊՈՎԻ
ԶԸՆԳ)
Այս
մտրակները
տարուբերվում են
ճանապարհին մենք
շրջանցում ենք
մեծ ու տգեղ
գագաթը, և
դադար առնում
այդ կուրծք տվող ծովածոցի մոտ:
Խոտածածկ Աստղ խոտի ժամին:
Սև հոդվածոտանի Ուռենին ճեմում է
փոշոտ տախտակին, պատասխան տալով
ձեր դիմուներին և ետ է
ոստնում հազիվ մի Փո՛ւհ:
սարդոստայններում կքած՝
նոր բանտապահը հետևում է
սառը կրակին:
Արագորեն, իբրև միտք,
մի արծաթ
ձեռք դուրս է ձգվում
ճաղերի արանքից
ոլորվելով,
հիմա պատմիր
ինձ, թե ուր
վազեց նա

և ինչի համար
այնտեղ, ինչպե՞ս:
Նշենք և բորբոք
գժու-
թյունը,
բալիկներս,
մի ան-վերջանալի ոստյուն-պըլտոց
անցման
և դրա հանգրվանի միջև:
Թմփալով մեջը
Հերիկոն Լեռան,
եթե կսազի քոռ քուռակ-աչքերի կապը:

Արևմտյան
առկայծում

Այդ ամենն սկսվեց
Նափամ թույնից
մի անսովոր դեղինով
չսազելով
խտտող փետրե լուսամուտներին: Ապա նրա
խոսքը, որ գնդակը
շատ հեռու չնետի -
Առաքելության Բլուրի վրա
մի ճյուղավորվող դրախտ:
Օրվա ամենաթեժ պահին,
մի ազնիվ նշույլ գաղտագողի մոտեցավ մեր
Քրոջը: Զատկան շուշանի և
թույնի ետևում մի լողացող մակույկ:
Դու ասացիր, որ մենք
կլինենք այնտեղ
մի բոպեից: Իրար միահյուսված աղոթելիս
մի օր մենք ճանաչեցինք
գունատվող ցոլքը:

Խմբավարը
ձերբակալված

Գարաժի նվագախմբի բլյուզը և մի կում...
Մեղմորեն ճոճվող տոնախմբություն
լանջին ճոճորվելով
նվագում են ծափերի համար: Քաղցր շուրթերը
շշնջում են կանխիկ պարգևի մասին: Մի բիս ևս,
Վստահ եմ-
Դեպ վեր ղողանջող իդիլիկ մի երգ տակավին ճայթող ցաքուցիր: Ի՞նչն է այնտեղ փչում
փոշոտ
երիտասարդի Վերջույթի վրա: Circuitus spiritus, "ասես, հա, քանզի,
o աստված, հա, այդ ՀՆՉՅՈՒՆԸ": Արյո՞ք կովբոյի երերուն
շարժուձևով գլուխ կբերենք Mascoutah Firefly-ը, էլեկտրական, լավ
կատարում, կրկին, պոնչո / անհնար է վերահսկել մութ աղոթքը, և կամ
աղալը երբ ողջ աշխատանքը ջուրն ընկավ: Իհարկե լայն ժեստեր
անելով՝ (ավելի անուշ բան չկա, քան այս, ցսկ-ցսկը): Զրահի
մշտադալարություն երբեմնի Լոնդոնով, կրծքիդ շուրջը շրջագծելու:

Պստլիկ սրիկան

Հասկանում եմ.
Հյուծված մարդն ընկավ:
Իսկ դու՝ ոչ,
բարեկամաբար, աշխույժ և մոլտալով,

փաստորեն, համոզիչ:
Ողջ լեր:
Մի անուշիկ բալիկ ունեք՝
(մակերեսային հանցանքներ պլանավորող
մի թաքցրած կռան):

Ապրանքաների շրջապտույտ: Տես, Պլատոնի Քարանձավն
Հառա՛ջ, ջուրն անմաքրությունից պաշպանելու:
Արյան հոտ եմ առնում:
Լարիր ոսկրածուծդ այդ սրնգահարի մեղեդիով

և հետևիր, այս մեռնող բանին:
Գլխավերևի աստվածությունների համար,
Որքան՞ է կշռում ձեր հոգին: նա հարցրեց:
Աքսորե՞լ դրան, մորուքավոր կով,
բերանումդ հալվե՞ց,
թե՞ ոնց:

Կենտրոնական ձայնը

Բարձրացրեք ձեր գլխարկը, մատը, բթամատը,
մեկ, երկու երեք: Սարկավագի Էշերը

շորորում են փեշերը, պճնվում են և խոնարհվում:
Գաղտագողի սահիր լողացող մեծ ու

գորշ սագ: ԹՈ՛ւՀ, գնացել է ծովափից:
Ինչն ըստ նրա H20 պիտի լիներ՝ իրականում H2SO4 էր:

Հուսանք, որ գոնե ձիաճանճը կնահանջի:
Նա է թակում:

Ու հիմա իր քունը, նրա երազն էր:
Ակամա բամբասանքչիք,

Օ~ ինչ գազանուհիներ են լողում, կարապը, լողաց կամ,
արաձեց խնդագին, ինչ հարկ կա -- զոռալու

դեղին մազերը, ճմուռը՝ դառը դաս:
Կարծեմ թե նրա ստամոքսն իրեն լավ զգաց, մարսելով

արծաթը: Առավելապես քարտեզներով կողմնորոշվելով, քան
խտտան փետուրով: Խզբզիր, ի՞նչ խզբզվում է

շրջվելով ետ: Զգույշ: Ջղաձիգ, այո, ծիծաղով
(Աջակողմյան են շեփորները քամու):

Աղավնին՝ իր ուռճացված խելքով:
Անարատի տեղ ԾԱԽՎԵՑ...

Տարեց երկիրը կամ
առանց այլուրեքության

Նրանք ովքեր կճմտում են
ձեր մարմինը
ուղեղն ու սեռը:
Նրանք ովքեր ճմռում են դա
(N դիտվում է հար և նման N-ին):
Ճշմարիտ է, սև սմոկինգով, կամ պարուհու կարմիր փեշով:
Նրանք միահյուսում են գեները և meam -երը,
և նա ցանկանում է նրան իր անձնական գազանանոցի համար,
ու սպասում է: Եվ, նա ցանկանում է ներան՝ նույնպես:

Ծորակի սառը ջուրը,
զգայանալով պերճախոս ու գիտակից,
իր գաղտնիքները մերժելով, անգամ քեզ, o մարդ:
Սա է: Մարմնի մեջ չիպը դնել -
«Ընկրկեցեք, ու հեղեղեցեք հողը», նա ասաց:
Թեև, մտածեցինք, որ լսեցինք դա, «ես, ռռ-բոտ»:
Եվ շուկաները ցնցվում են, Եվ կրկին, Մռռացա:
Զանգերը: Գայլ-թռչունը: Լուսնի լույսով
Խոստումներ Խոստումներ: Նոր Սքանչելիքներ
Վեր, վեր, վեր, տարածվելով Մուրճի մեջ - մինչև
մենք կառուցեցինք դա, իբրև վարձատրություն:

Ու, ահա, մի տեղ,
մի ճաշկերույթ, մի շպարված դեմք: 4 կերակրատեսակ
«Իհարկե, իհարկե,
ձեզ մի-քի՞չ էլ, պ-ն», թե՞ Երկինքը կտա:
Պարտեզն, հավաքված իր պահածուրիկներով
/ աղքատիկ ճաշացանկ է չէ՞: Հարմարվեք, բարեկամս:
Վերցրեք ձեր տավարի միսն ու ռնդեցեք:

Արահետի փչակներում, անկող մի բան:
կարմիր ու առավել կարմիր:
Լույսն՝ անսքողը քողարկող: Քողարկող այս օքրայագույն
հոկտեմբեյան օրերը: Մի սև քամի Լոնդոնի վրա,
թե, դա երկինք-աստվածն է, տառապանքով զենքը լիցքավորելիս,
որ կրակահերթերի արանքում թուքն է ֆոթացնում,
պատռոտված կարմիր վազքի մեջ

Աղբի: Նա այրեց իր ցատկելու փայտիկը
և արծաթե ձեռնաշղթան և իր խելքը:

Ջուլիետի գերեզմանի մոտ հսկման կարիք չկա.
Ուղղությունը մեկն է՝ Տուն: Ու խնջույք:
Մեղմացող լույսեր: Բրնձի հատիկներ:
Ոտնահետքներ:

Եղերերգ մի մահացու Գեղեցկության համար

Փակ Կամարաշարքեր: Ու գետի կամուրջի վրա
մենք տիրանում ենք, ոսկուն ու համեմունքների,
հեռվից Նեմո(ոչ մեկը), հեռվից ստիպում են-հավատալ
քանի դեռ հաջող են- Թարթումն ու սահքը:
Կապիտան-Ամերիկան շպրտում է իր հզոր վահանը:

Ուղեղի ցնցում- խաղաղության բանակցությունների նման,
բայց, ԽԱՂԱՍՐԱՀԻ դահլիճում:
Մուրճն է: Զվարճանքի տունը քանդելիս:
Ֆաթուա: Լավ, ի՞նչ էր նա ակնկալում հիմա,
սպասյակ տղաներ, թե, մի դալիբ ճերմակ սապոնը,

մաքրե՞ց նրան մի օր: / Հոգնած այլանդակ արատների՞ց:
Միայն սահմանափակ ժամանակով ... բայց, սահման գոյություն ունի, ասաց նա:
Ու Իր Մեծություն՝ Մեծ Մեծ Կայսրը մռայլ նայում է ետ
(այդ փոփոխվող խորամանկությունները) ինչի համար որ գործի էին դրվել՝
այդպես էլ պատահեց: Մաքուր հացի երգը:

Մենք ձեզ կասկածեցինք այնտեղ, այնպես չէ՞:
Մատով իրեն անհայտ մի թուրմ խառնելիս:
Լուսնի լույսով կեր հայթայթելիս: Մոմը, վանականը, թանաքի հորը:
Քայլերգի երաժշտություն, շարականներ: Ex MACHINA deus:
Այն՝ ինչն ինձ է բաժին ընկնելու, կարծեմ:

Ծիածանի սենյակը

Բարետեսը կամ մատրիցը:
Ներա տունը: Վերիշենում

Նա է կառավարում
բիլիարդի 8-րդ գնդիկի ետևից:

Ծիածանի Սենյակում -
ճաք տված երկնքն է:

Չկան ամսեկան վճարներ:
Չկան սահմանափակումներ բացի
«մի միացրեք լույսը»-ից ...
Մի գայթող ճամփորդություն էր:

Ուր դեռևս չունեինք:
Մրից մաքրում:

Երդման ներքո

Շարունակվող մեխանիկական դժվարությունների պատճառով
Աստվածների նման ապաշնորհ կառավարման պատճառով
Եվ քանի- որ ես դա արտադրեցի նրա համար ու ներա ու անգամ քո
Ներկված թռչունն ու բոլորը,

Անգամ եթե դուք անեք այդ մեծ ցատկը
Անգամ եթե խոնարհվում եմ ու ծնկում
Կամ շրջվում եմ դեպի մեծ կթու կովը
Ես չգիտեմ ինչ, ինչ է պատահել այստեղ:

Կային նշաններ:

Երեք մրցանակ,
Դահլիճում փտելիս:
Հեղած թեյի և
Հեղեղվող անձրևի միջև

Ափի խզվածքի երկարությամբ
Քարն ինքն իրեն բարձրացավ,

Ողբալով, ձևաափոխվեց...
Գինու:

«Դու» կոչեցյալը մետաքսներն հավաքեց:

Խմեք, խմեք Ես ասացի:
Ապա, ջերմոցում -
Մահը: Նա ջութե թիկնոց է հագել և մի սառը հայացք...
Հրեշը նստել ու սպասում է վիրաբույժի ձախողմանը:

Մանր որսը տենչում է Ազատությունը մերոց:
Ու, ժամն անցած, ժամկետանց բալասան:
գողոնի առջև, շղթայակապ:
Փրկանքը կայացավ:

Գինը լույսն է:

Կեցվածքի նռները

Լուսանկարչական ապարատի կոճակն, ու
չրրբխկ: Դաշնամուրով

Շոպեն նվագելով, եթե-
Ձերդ Մեծությունը թույլտրի:

Ոչ ես նրբաքանդակ,
մի հստակ ֆիլիգրան

ժանեկագործության, այո
կամ մի մոզաիկ կարկատանով վերմակ:

Հիմա մի ձևացրու `
թե հասկացար...

«Դուրս, դուրս անիծյալ Բիծ»:
Եվ շու՛տ:

Ինչ՞ էիր ուզում
կամ պատկերացնում, որ մտածում ես թե՞

գտար: (Նա նստեց այնտեղ
և նա նստեց այնտեղ ու

նա ընկավ սնապարծության գիրկը):
Հրաժեշտ քեզ, ու Մնաս բարով

ընկերս: Մի՛ նայիր ետ:
Մենք մրրկեցինք հարավ-արևմուտք,

Կապույտները, որ հատում են գիծը
«գերաաան» կանչելով:

Ծամելը և
Մաթը (ռուպ)

Ճակատագրական աշխուժության արևը
անկարելի է քո սիրտը պահել
--Սամուել Բեքեթ

Այս Երկուշաբթի Կայսերական թատրոններում ամենուր
Սիրտը մտավ երբ ձիերը ցամաք էին
վեց շաբաթով - Գնդապետ Ֆոն Զըռռայմանը:
Կեղծ ոտքեր են շշնջում մեղսագործ Լճի շուրջ:
Երկվորյակությամբ ծվատված, քո կրկնակի-կացինը
գաղտագողի շարժվող հպանցիկ հայացքը դեպի կռնչացող բուն և ծաղկող
Հալեյի գիսավորը: Հարցուպատասխան - «Ես պ-ն», Հեյ, միստր /
երեկոյան խորամանկություններ զառով, գլորեք, գլորեք գնդակը,
կանաչ բերրի հող լուսավորված խավարում: Բարձրացված Խարիսխ,
լացի ձայն: Անուղի ընթացք, Գառան Լեզու,
անհանգիստ և անպատճառ (իմ մեղրածոր հապաղում,
իմ ման-եկող կարկանդակ, իմ Օբադիա, իմ հավ ու տապակած խոզի միս)
Հարավին միանալ աղվեսանալով, կրակում է՝ լավ կրակոց, սեր:
Ես եկա, Ես տեսա, Ես գայթեցի: Մեղադրեք խեղճ Կայենին:
Ապա, ռիկաշետով դեպի բարձունք: Անկտրել, ճանճորս /
թիկունքին ընկած և լքված Օ, կցմցելով բեկորն
այստեղ և այսուհետև, պատգարակի լոտ՝ Սուրբ մեխի համար: Սա եթեր չէ,
ոչ գոգլի, ոչ շնչավոր, ոչ հիմնական կես-երակ, ոչ էլ բարի մայրերակ,
և այլն և այլն: Ժամացույցների անձևանալը փետուրին փետրավորելով
փոքրիկ կոչնազանգը չվաստակած Գանձի
վեր ընկնելը ճոճքը:

Գրողների համագործակցություն.
Պատրիկ Դավիդի բանաստեղծությունները

Պատրիկ Դավիդի բանաստեղծություններն արդյունք են
Արամ Դ. Դոնաբեդյանի ու Պատրիկ Լաուլորի միջև համագործակցության:
Դրանք շարադրվեցին
երկարատև մի շրջանի ընթացքում երբ Դոնաբեդյանն էր սովորաբար
տրամադրում առաջին սևագրերը: Հեղինակներն հանկարծաստեղծեցին
միասին, հեռախոսով ու հաճախ
անձնական շփմամբ, երբեմն գրանցելով իրենց ճիգերը ժապավենի վրա
հետագայում վերաքննելու ու վերանայելու համար: Երաժշտական, հույզեր առաջացնող,
տակավին հանկարծաստեղծ բնույթը բանաստեղծությունների
հավաստում են բանաստեղծական արժեքները, որ երկու գրողները
էական համարեցին իրենց համատեղ աշխատանքում:

III. Անասելի տարածությունը

Խավար շաչյունը շեփորների
Թաց հարվածում է
Ծփիների ոսկե սաղարթի միջով ...
-Գեորգ Թրակլ

Անսուրբ ճաճանչավոր

Անսուրբ Ճառագումը Լուսամուտին
Թափանցող մի շոր է շպրտում
նրա մեջքին
Զիջել Ծիրանի բուրմունքին
Կեղևազերծ արևի Գիշերային-շվաքը Կաթելու է
Ծովը շլացնելու
Միայն Ամպհովանին է զսպում նրան Դեմքը
շրջելուց
կրկին կնճռոտ Կքանստած բարձր դաշտի
Կաթնա –քուլա

Ուժը և շարժը ծավալի մեջ դատարկվելիս
ինչպես Ալ-թռչնի կարմիր ռիթմերը
Շեփորները գութանի ետնից /Ակոսները /Ջազը

Երկար ու փռված/Հնարավոր է նաև
Շատ շուտով մեկ այլ տերև հոլովվելով կընկնի հեռու
Մոխրի դողդոջը
իբր՝ Սպասիր, ճախրող մարտահրավերն ընդունելու
Կապույտ Առվակներ/ Մառախուղ/ հսկում
Պարտեզների մեջ
զգուշացման լամպը արքայանում է մեկուսի
Ներքևում երկու փոխանակված ծաղկեպսակ
Իմաստավորում են այս ամենը

Վաղը Հավանայում
Երեխաները ճուտիկ են խզբզելու
կրաքարի Գետախորշում
խցանահանի ծխով/ Վրձնահարված դատարկին
աղամանդի պատառոտված ցողուններ

Անհանգստացած

Փոքր-ինչ Էպիկա

Նա ափալ-թափալ շարժվում է
Գագաթին:
Դիտելով Ռիմուսնին ու Լիչին
Վահանով ու տեգով
Առաջապահներին ջնջելիս

Խավար սիրո մեջ
Նա վերածվում է
Անմաքուր պահապանի,
Եվ անարդյունավետ մի մեթոդի:
Օրեստեսի հմտությունը բացահայտելով:

Ոչ, այս շարժանկարը
Հերովդեսը չէ,

Սակայն, հասարակության
Հիացմունքի առարկան անցնելիս
Արևից էլ բարձր է ցատկում:
Մեկ,

Կծան բարուրի մեջ,
Վայր է դնում գլուխը ներա:

Գլխավոր ննջարանից
Սև Ակորդներն հասնում են
Տան հեռավոր անկյունները:

Ջուլհակի ձեռքերում
Կապույտը քիչ է,
Զգույշ, յուրաքանչյուր պատռվածք
Կարող է գործքը քանդել...

Հյուսիսարևմտյան Տարածքներ, 1812

I

Ապրիլ,
բողբոջն հասունանում է մեղմորեն:

Երկար վզով թռչունները
Շրջան են գործում,

Անհայտացիր
կապույտ լճի վրա:

Ծովափին սարդը,
Փափուկ շրջվելիս,

Խտտում է սրունքը
Շարժվում է կողքանց:

Փախեք,
Հնացեք անտառում:

II

Քանի որ վայրի բնությունը,
Գետն հատելով երկինք չի հասնում,

Իսկ ձայները
խորամանկում են մակերեսներին ուր,

ծովափի գծի վրա, երեք ձուկ
խայծն են երկչոտ նապաստակների:

Վաճառել կամ փոխանակել:
Ընկեք, քացի տալով ծառերի շարքին:

Զի ճամփորդելիս, հետընթաց, ժամանող հողը
Շրջանաձև հակադարձում է շարժումը
Թիերի:

Տարհամոզում

Քայքայում, հնացած ճարտարապետություն,
ժամերով սահմանափակ և մեքենայական աղոթքով կանգուն:
Արևելքում թերթաքարի բիծ: Կարմիր սուզակը թաքցնում է
ցուցամատը:
Տեղից պոկվելով առաջին անիվը վնգաց,
աղում է՝ սակայն ոչ կերպարանք:

Լուսինը
հագուրդներերով լի,
շրջվեց
դեպի տեսարանն այս թմբի

թույլ ձայնով կամ սեղմված կոկորդով,
անկատարության
մի բացարձակ որակ՝

ոսկեկար հանդերձանքն է ներկայանում
այսպես:

Հետագծեր

Դիտելով գորշ հետագծերը գագաթից

(Գլուխն ու կես ոստը նավաքթից)
Առաջ
Հարձակվող ճոպանի Ցուլ
Գլորվող

Ափն ի վար
Յուրաքանչյուր երկնի սև Կամարն ընկնող
Ամբողջ Զարկը
Կարկատաններ
Ժամանակը ճշմարիտ կարմիր է դառնում
Անարցունք `
Կեցվածք ընդունել կամ հրաժարական տալ

Միայն սանդուղքը Մինեսոտայի ցրտին
Ազատ ընկնում է առանց
բռնելու
Հասնելով վերին ցրտին
Սառույցի սև բռունցքը
Փշրում է
Աննկարագրելի
Տարածությունը

Ռնգեղջյուրը

Հողի մեջ խրվող,
մեծափոր
Խոնարհ
և հակվելով

ճեղքված երկնքին:
Բխեցնում է կոտոշը, պատյանից

Մի խավար աչք ու
Ծանր խոմփոց:

Corps n corps,
Առանց ընկրկումի, կամ վախի

Redoublemant:
առանց այլևայլության Խողխողողը

խաղի Վերջը:

Ուեյբրիջում

Ուեյբրիջում, հելենականը կականեց:

Թող, ճնշումը կորության մեջտեղին:
Տեսությունը գերակայեց,
Փոխանցման տուփեր, որ սողում ու նեղվում են,
Կտորն ուղերձ է ուռեցնում:

Նա լսում է սղղալը, թրրրխկոց:

Մոտորանավակը, արևելք՝ փքուն ալիքների միջով,
Անհավասարակշիռ թռնում է լուսին,
Անուշադրությամբ ոգեկոչված
Նյարդերիս գնով հարվելով դեպ վեր,

Տեղյակ լինել. Թուջե համակարգն անկայուն է: